

155. ԲԱՐԸ ԿԱՆԱՆՁ ԿԵՐԱՎ

Մին թաքավորը շորերը փոխած, ուրան վեզիրին նհետ երգյիրը շոռ ար կյամ, թա տրեսնա ժուղովուրթը հի՞նչ պենի յըն, հու հի՞նչ ա անում, հո՞ւնց ըն ապրում։ Մին օր քյինամ ա տրեսնում մին մրեծ մարթ ուրան հըյաթումը մին հունց ծառ ա տրնգում, վրեր քառասուն տրոնան նոը պիտի բար տա։ Թաքավրեարը մուտանում ա, կոզի շորերը փոխած ա ինում, էտ մարթը դաստին նինանչում ա։ Տրան հրցընում ա, թա տու ումեդ օնե՞ս, թա քառասուն տարե ըպրբլական ըս, վրեր տրա բարն օտես։ էտ մարթը թա խե մունք հինչ վրեր օտում ընք, լոխ մրեր տնգած ծառեն բարն ա՞, մրեր պրպերեն տնգածն էլ ա նհետը։ Թաքավրեարը ուրան վեզիրին թա էս մարթը շատ խելունք խոսկ ասեց, սրան մին տրսսանուց վրեսկե տու։ Վեզիրը տուն ա օնում մին տրսսանուց վրեսկե տամ, էտ մարթը քիրեն տակեն ծիծաղում ա։ Թաքավրեարը հրցընում ա, թա խե՞ ծիծրղեցեր, տա թա՝ օրիշնեն էս ծառը տնգում ըն, բարը քառասուն տրոնան նոը օտում, ես հաչա նոր ըմ տրնգում, բարը մեհենգյ կերե։ Թաքավրեարը վեզիրին թա՝ էտ խոսկեն հետ մին վրեսկե ել տու։